

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2019 թվականի
մարտի 20-ին կայացած նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 33-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին
և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում
կատարված աշխատանքների վերաբերյալ /զեկ.դոց.Ն.Ա.Հարությունյան/
2. 1-ին կուրսերի կուրատորների հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ
/զեկ.կուրատորներ/
3. Ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցի քննարկումն ու հաստատումը
/զեկ.փոխդեկան Վ.Պ.Վարդանյան/
4. Գիտական հաղորդում /զեկ.ասպ.Վ.Ա.Պոտոսյան/
5. Գիտական կոչման շնորհում
6. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ. «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի վարիչ Նարեկ Աղվանի
Հարությունյանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների
վերաբերյալ: Ն.Հարությունյանը մանրամասնորեն ներկայացրեց ամբիոնում տարբեր
ուղղություններով կատարված աշխատանքը. թվարկեց հրապարակումների
քանակը, բնույթը, հոդվածների ոլորտը: Խոսեց նաև ամբիոնում ընթացող
միջազգային համագործակցության շրջանակներում արտերկրից եկած ամբիոնում
ստաժավորում անցած մասնագետների վերաբերյալ: /հաշվետվությունը կցվում է/:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.

Մ.Գրիգորյան – 1.արդյո՞ք ամբիոնը ներկայացրել է որևէ գիտական թեմայի հայտ Գիտության Կոմիտեյի կողմից հայտարարված մրցույթներում: 2. Ինչո՞ւ անհատապես ներկայացվող ծրագրերում ամբիոնի, ֆակուլտետի, համալսարանի մասնակցությունը չի երևում:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամբիոնի կողմից հայտ չի ներկայացվել: Գալիքում ամբիոնը հաշվի կառնի բացթողումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Վ.Վարդանյան - Խոսեց ընթացիկ տարում ամբիոնի ունեցած գիտական նվաճումների մասին և ամբիոնի կատարած լուրջ գիտական և կրթական մեծածավալ աշխատանքի մասին: Ասաց, որ ամբիոնն ուս. տարում իր առջև դրված աշխատանքը կատարել է և առաջարկեց կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Մ.Գրիգորյան – Ամբիոնում նկատվել է առաջընթաց, սակայն դեռ կան անելիքներ: Առաջարկում եմ կատարած աշխատանքը գնահատել բավարար,-ասաց Մ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետու ժամանակաշրջանում «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի վարիչ Նարեկ Աղվանի Հարությունյանի ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել “բավարար”:

2. ԼՍԵՑԻՆ. Կ.Ալեքսանյանի, Վ.Անդրեասյանի, Ա.Հովհաննիսյանի, Տ.Սկրտչյանի հաշվետվությունը 2018-2019 ուս.տարվա ընթացքում կատարած կուրատորական աշխատանքների վերաբերյալ: Հաղորդման ընթացքում կուրատորները մանրամասնորեն ներկայացրեցին կուրսերում տիրող բարոյահոգեբանական վիճակը, ինչպես նաև կրթական մակարդակը, առաջադիմությունը և սոցիալական ըդհանուր պատկերը կուրսերում: Բոլոր զեկուցողները կարևորեցին կուրատորի դերն ու նշանակությունը:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. **դոց.Մ.Գրիգորյանին** հետաքրքրեց ուսանողների կողմից կուրատորին ուղղված հարցերի բնույթը: **պրոֆ.Թ.Վարդանյանը** հարցրեց կուրատորների

կարծիքը այդ պարտականությունը բարձր կուրսերի ուսանողների վրա դնելու վերաբերյալ:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. **պրոֆ.Ա.Ռ.Ավագյանն** իր ելույթում անընդունելի համարեց բարձր կուրսերի ուսանողի կուրատոր լինելը և շեշտադրեց, որ կուրատորի նման պատասխանատու պարտականությունը պետք է ստանձնեն թե՛ կենսափորձ և թե՛ մանկավարժական փորձ ունեցող անձինք: **պրոֆ.Վ.Վարդանյանը** ողջունեց սեպտեմբերի 1-ի նախօրեին ՈւԳԸ և ՈւԽ կողմից ուսանողների հետ հանդիպումը կազմակերպելու գաղափարը: **դոց.Մ.Գրիգորյանը** գտավ, որ կուրատորի ինստիտուտը պետք է պահպանվի, ավելին՝ կուրատորը պետք է ուղեկցի ուսանողին նրա ընդունվելու առաջին իսկ օրվանից մինչև ավարտման օրը՝ ասել է թե, նա պետք է դառնա տվյալ կուրսի հոգևոր հայր: Առաջարկեց դիմել ռեկտորատին կուրատորի ինստիտուտը պահպանելու անհրաժեշտությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Կուրատորների աշխատանքը գնահատել բավարար:

3. ԼՄԵՑԻՆ. **պրոֆ.Վ.Վարդանյանի** հաղորդումը ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցի վերաբերյալ: Վ.Վարդանյանը մանրամասնորեն ներկայացրեց մագիստրական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության օրերը: Վ.Վարդանյանը շեշտեց, որ ժամանակացույցի նախագծի կազմման ընթացքում հաշվի են առնվել կուրսերում ուսանողների թվի քանակը, ինչի արդյունքում մեծ:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ. **դոց.Մ.Ա.Գրիգորյանը** կոչ արեց ամբիոնի վարիչներին հանձնարարել ամբիոնի գործավարներին ուսանողների էլ.հասցեներին ուղարկել ավարտական աշխատանքների պաշտպանության օրերը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ամփոփիչ ատեստավորման քննությունների ներկայացված ժամանակացույցը:

4. ԼՄԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասպիրանտ Վահան Ակսելի Պոտոսյանի գիտական հաղորդումը «Տարաբնակեցման զարգացման հիմնախնդիրները ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքներում» (ԻԴ.03.01.«Աշխարհագրություն») թեմայի վերաբերյալ:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.

դոց.Ս.Սուվարյան – «Սպասարկման կենտրոն» ասելով ի՞նչ նկատի ունի հեղինակը: Ի՞նչ ժամանակահատվածի տվյալներ են օգտագործվել աշխատանքն իրականացնելու ընթացքում: Ի՞նչ հիմնախնդիրներ են դրվել ուսումնասիրությունների հիմքում:

դոց.Ա.Թ.Գրիգորյան – Ինչպե՞ս է կատարել հեղինակը «Լեոնային» և «Բարձր լեոնային» մարզերի տարանջատումը:

դոց.Գ.Փ.Ալեքսանյան – Արդյո՞ք աշխատանքում ներկայացված սխեմայով հեղինակը կարողացել է հիմնավորել դրույթները: Ի՞նչպիսի գործոններով և սկզբունքներով է հեղինակն առաջարկել համայնքների ներկայացված խմբավորումները:

դոց.Պ.Գ.Դավթյան – Ի՞նչ է տալիս աշխատանքում կատարված տարածքի հողերի և բնակչության կորելյացիոն կապը:

պրոֆ.Թ.Գ.Վարդանյան – Ինչպե՞ս է կատարել հեղինակը գծային կորելյացիան և որքա՞ն է կորելյացիայի գործակցի արժեքը: Որքանով է նպատակահարմար գտնում ասպիրանտը աշխատանքում դիտարկումների ժամանակ հաշվի առնել ներկայիս բնակավայրերի թվաքանակը:

դոց.Մ.Ա.Գրիգորյան – Ինչպիսի՞ն է աշխատանքում ներկայացված բնակավայրերի խոշորացման սխեման և արդյո՞ք դա կբերի տվյալ բնակավայրերի զարգացմանը:

Բոլոր հարցերին Վ.Ա.Պոտոսյանը տվեց հանգամանալից պարզաբանումներ:

ԽՈՍՏԱՆՑՏՎԵՑԻՆ.

պրոֆ.Ա.Ռ.Ավագյան – Աշխատանքում բնակավայրերի միավորման և խոշորացման հիմքում դրված են հետևյալ մոտեցումները 1.տրանսպորտային մատչելիությունը, 2.բնակչության թիվը և 3.սպասարկման կենտրոնների հեռավորությունը: Կատարվել է լուրջ գիտական աշխատանք և առաջարկեց երաշխավորել աշխատանքը դնել հրապարակային պաշտպանության:

դոց.Ս.Ռ.Սուվարյան – Խոսեց ասպիրանտի մասին որպես գիտաշխատողի և բարձր գնահատեց Վ.Պոտոսյանի գիտական պոտենցիալը: Ելույթում Ս.Սուվարյանն առաջարկեց նախկին ԽՍՀՄ շրջանակների մոտեցումներից դուրս գալ: Դիտարկում կատարեց հստակեցնել «Սահմանային» և «Սահմանամերձ»

տերմինաբանության գործածումը: Ասաց, որ ներկայացված աշխատանքի հետազոտական մասը համապատասխանում է դրույթներին, առաջարկեց փոխել շեշտադրումները և ներկայացնել պաշտպանության:

պրոֆ.Թ.Գ.Վարդանյան – Ողջունեց նմանատիպ աշխատանքը, քանի որ հիմքում առկա են մաթեմատիկական տարրեր: Հսկայական աշխատանք էր կատարված, սակայն ներկայացնելը չհաջողվեց: Ասաց, որ ասպիրանտը տիրապետում էր նյութին ամբողջովին: Առաջարկեց կրճատել աշխատանքում օգտագործված բազմաթիվ գործակիցները: Թ.Վարդանյանը նշեց, որ ներկայացված զեկույցում նկատվում էր մասնագիտական տեղեկատվության պակաս: - Այնուամենայնիվ աշխատանքը բավականին հետաքրքիր է և նշված դիտողությունները հաշվի առնելուց հետո առաջարկում եմ երաշխավորել հրապարակային պաշտպանության,-հավելեց Թ.Վարդանյանը:

դոց.Պ.Գ.Դավթյան – Խոսեց Վ.Պոտոսյանի պարտաճանաչության և բարձր գիտական պոտենցիալի մասին: Նկատեց, որ աշխատանքը էլ ավելի կշահեր եթե կազմակերպվեյին հարակից ամբիոնների քննարկումներ: Նշեց, որ բավականին աշխատանք է կատարված և այն գրեթե ավարտուն է: Առաջարկեց վերջնական ուղղումներն իրականացնելուց հետո երաշխավորել հրապարակային պաշտպանության:

աւ. Գ.Ղամբարյան – Նշեց, որ թեման արդիական է: Ասպիրանտը աշխատանքում փորձել է արտահայտել տարաբնակեցման համակարգերի մոտեցումները: Աշխատանքն արտահայտում է բնակավայրերի խոշորացման դրույթները: Առաջարկեց հաշվի առնելով դիտողությունները և որոշակի լրացումները աշխատանքը երաշխավորել ներկայացնելու հրապարակային պաշտպանության:

դոց.Մ.Ա.Գրիգորյան – Աշխատանքը բավականին հետաքրքիր և արդիական է, ունի կիրառական նշանակություն: Մ.Գրիգորյանն առաջարկեց աշխատանքը ներկայացնել հրապարակային պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ. Երաշխավորել Վահան Ակսելի Պոտոսյանի ներկայացրած աշխատանքը հրապարակային պաշտպանության:

5. *ԼՄԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի հաղորդումը Երկրաֆիզիկայի ամբիոնի ասիստենտներ, երկրաբանական գիտությունների թեկնածու Մարինե Սարգսի Մկրտչյանի, Լյուբա Բարատովի Միրզոյանի և Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի ասիստենտ, երկրաբանական գիտությունների թեկնածու Եսթեր Սոսի Մանուկյանի դոցենտի կոչում ստանալու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վարդանյանը նշեց, որ Մ.Մկրտչյանի, Լ.Միրզոյանի և Ե.Մանուկյանի գիտամանկավարժական գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են դոցենտի կոչում ստանալու համար ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Մրցութային հանձնաժողովը որոշել է հարգել Մ.Մկրտչյանի, Լ.Միրզոյանի և Ե.Մանուկյանի դիմումները և միջնորդում է ֆակուլտետի գիտական խորհրդին ստանալու դոցենտի կոչման երաշխավորությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դոց.Ս.Գրիգորյանը բարձր գնահատելով Մ.Մկրտչյանի, Լ.Միրզոյանի և Ե.Մանուկյանի գիտամանկավարժական գործունեությունը ֆակուլտետում, գտնում է, որ նրանք արժանի են դոցենտի կոչում ստանալու և առաջարկեց հարցը դնել փակ (զաղտնի) քվեարկության:

Փակ (զաղտնի) քվեարկություն անցկացնելու համար առաջարկվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Պ.Գ.Դավթյան, անդամներ՝ պրոֆ.Վ.Պ.Վարդանյան և ե.գ.թ.Լ.Վ.Հարությունյան:

ԼՄԵՑԻՆ – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց.Պ.Գ.Դավթյանի հաղորդումը փակ (զաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ, ըստ որի, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 38 անդամներից քվեարկության մասնակցել են 33-ը:

Եսթեր Մանուկյանին դոցենտի կոչում շնորհելու համար կողմ են քվեարկել 33-ը, դեմ՝ չկա, անվավեր՝ չկա:

Մարինե Մկրտչյանին դոցենտի կոչում շնորհելու համար կողմ են քվեարկել 33-ը, դեմ՝ չկա, անվավեր՝ չկա:

Լյուբա Միրզոյանին դոցենտի կոչում շնորհելու համար կողմ են քվեարկել 33-ը, դեմ՝ չկա, անվավեր՝ չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և երաշխավորել Եսթեր Մոսի Մանուկյանին, Մարինե Սարգսի Սկրտչյանին և Լյուբա Բարատովի Միրզոյանին՝ դոցենտի գիտական կոչումը շնորհելու:

6. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

6.1 ԼՄԵՑԻՆ. ԼՄԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի ասպիրանտ Ջուլիետա Արթուրի Հովասափյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. ամբիոնի վարիչ դոց.դոց. Գ.Փ.Ալեքսանյանը, Ս.Ռ.Սուվարյանը, պրոֆ.Ա.Ռ.Ավագյանը: Առաջարկվեց ամբիոնի ասպիրանտ Ջուլիետա Արթուրի Հովասափյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել <<Զբոսաշրջիկի սպառողական վարքի վրա ազդող գործոնները ՀՀ ներգնա զբոսաշրջային հոսքերում>> վերնագիրը և գիտական ղեկավար հաստատել աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Ռուստամի Ավագյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի ասպիրանտ Ջուլիետա Արթուրի Հովասափյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել <<Զբոսաշրջիկի սպառողական վարքի վրա ազդող գործոնները ՀՀ ներգնա զբոսաշրջային հոսքերում>> վերնագրով և գիտական ղեկավար հաստատել աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Ռուստամի Ավագյանին:

6.2 ԼՄԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի ասպիրանտ Ռենա Ռաֆայելի Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. ամբիոնի վարիչ դոց.դոց. Գ.Փ.Ալեքսանյանը, Ս.Ռ.Սուվարյանը, պրոֆ.Ա.Ռ.Ավագյանը: Առաջարկվեց ամբիոնի ասպիրանտ Ռենա Ռաֆայելի Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել <<Զանգվածային լրատվամիջոցների տեղեկատվության դերը ՀՀ զբոսաշրջային գրավչության ձևավորման մեջ>> վերնագիրը և գիտական ղեկավար հաստատել աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովիկ Յախշիբեկի Սայադյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի ասպիրանտ Ռենա Ռաֆայելի Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել <<Զանգվածային լրատվամիջոցների տեղեկատվության դերը ՀՀ զբոսաշրջային գրավչության ձևավորման մեջ>> վերնագրով և գիտական ղեկավար հաստատել աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովիկ Յախշիբեկի Սայադյանին:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան